ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ



Հայ ժողովրդի սոցիալիստական հարուստ կուլտուրայի զարգացման պատմության մեջ իր ուրույն տեղն ունի հայկական բարձրագույն դպրոցներից առաջինը՝ Երևանի Պետական համալսարանը։

Հայ ժողովրդի լավագույն զավակները շատ են երազել ունենալ հայկական համալսարան, ուր հայ երիտասարդությունը կարողանար հագեցնել իր ուսման ծարավը, գիտություններ սովորել մայրենի լեզվով։

Արտահայտելով ժողովրդի այդ դարավոր իղձը, Հովհաննես Թումանյանը գրում էր.

«Պետք է ստեղծել հայոց համալսարանը, ուր կարելի լինի բարձրագույն գիտություններն ավանդել ու տվորել հայերեն լեզվով։ Մեր տարրական ու միջնակարգ դպրոցների միջտիղը պետք է կառուցանել ու պահել մի գիտության տաճար, մեր մանր ու մեծ հրագների մեջտեղը պետք է վառել մի մեծ ջահ—Հայկական Համալսարան։

...Չմոռանանք, որ հայ ժողովուրդը ինչ բարձր բան կատարել է, միշտ կատարել է՝ չնայելով նեղ ու դառն ժամանակին... և սրա մեջ է մեր ցեղի մեծությունն ու մեր կյանքի մեծ դրաման. ինչ որ մենք կլինենք՝ մեր համալսարանն էլ մեզ հետ»։

Այդ մեծ ջահը հնարավոր եղավ վառել միայն 1920 թվականին, Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց ընդամենը 18 օր հետո։

Մանր ու դժվարին ժամանակներ էին դրանք։ Սովետական իշխանությունը ժառանգում էր ցարական Ռուսաստանի ծայրագավառը, որի առանց այն էլ հետամնաց ժողովրդական տնտեսությունը պատերազմի ու դաշնակցականների տիրապետության օրոր լիակատար քայքայման էր հասել։ Դաշնակների

---

[1] *«Թումանյանը քննադատ», Երևան, 1939, էջ 418—419։*

տիրապետության տարիներին՝ 1918—1920 թվականներին սովից ու տարափոխիկ հիվանդություններից կոտորվել էին մոտ 300 հազար մարդ։

Ձնայած երկրի այսպիսի ծանր վիճակին, 1920 թվականի դեկտեմբերի 17-ին, Սովետական Հայաստանի կառավարության հատուկ որոշմամբ հիմնադրվեց Երևանի ժողովրդական համալսարանը, մեր ռեսպուբլիկայի առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը։

Այսպիսով՝ Երևանի համալսարանը Հայաստանում Սովետական իշխանության հաստատման արդյունք է, սովետական կարգերի ծնունդը։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո Երևանի ժողովրդական համալսարանի հիմնադրումը պարտիայի և Սովետական կառավարության՝ ժողովրդական կրթության նկատմամբ ցուցաբերած անսահման հոգատարության և ազգային իմաստուն քաղաքականության արդյունք էր։

1925 թվականին Հայաստանի Խորհուրդների 4-րդ համագումարում համալսարանի պրոֆեսորների անունից ունեցած իր ելույթում պրոֆ. Ստ. Ղամբարյանը ասում է. «Հայաստանի համալսարանը հիմնվեց այն ժամանակ, երբ դրա համար միջոցներ չկային. դուք վերջին կոպեկները տվեցիք համալսարանին, երբ ամեն կոպեկը թանկ էր... ու հայոց պատմությունը երբեք չի կարող մոռանալ»[1]։

Հայկական համալսարանի հիմնադրումը իրոք խոշորագույն իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում։ Համալսարանի հիմնադրումով հայ մտավորականությունը հնարավորություն էր ստանում աշխատել Հայաստանում և ծառայել իր ժողովրդի գիտական ու կուլտուրական պահանջներին։ Հայ երիտասարդությունը մայրենի լեզվով բարձրագույն կրթության հնարավորություն էր ստանում։ Համալսարանի առաջին ռեկտոր է նշանակվում պատմաբան Հակոբ Մանանդյանը։ Համալսարանը իր բացման ժամանակ ուներ երկու ֆակուլտետ՝ հասարակագիտական և բնագիտական։

Համալսարանի բացման հանդեսը տեղի է ունենում 1921 թվականի հունվարի 23-ին, իսկ պարապմունքներն սկսվում են հունվարի 25-ին։

1921 թվականի փետրվարի կեսերից, Հայաստանում սկսված քաղաքացիական կռիվների, դաշնակցականների փետրվարյան ավանտյուրայի կապակցությամբ, համալսարանը ժամանակավորապես փակվում է։ Ձնայած ապրիլի 2-ին դաշնակ ավանտյուրիստները դուրս են շպրտվում Երևանից, բայց մինչև հոկտեմբեր ամիսը համալսարանը հնարավորություն չի ունենում վերսկսելու իր աշխատանքները՝ չնչին ռազմական հիվանդանոցի վերածվելու պատճառով։

1921 թվականի հոկտեմբերին Ժողկոմխորհի որոշմամբ վերաբացվում է Համալսարանը արդեն ոչ թե երկու, այլ հինգ ֆակուլտետներով՝ Բնագիտական, որը շուտով վեր է ածվում գյուղատնտեսական ֆակուլտետի. նրա դեկան է նշանակվում հայ առաջին ագրոքիմիկոս- միկրոբիոլոգներից մեկը՝ Պապա Բեջանի Քալանթարյանը. Տեխնիկական (դեկանն էր ինժեներ Դավիթ Գևորգի Հակոբջանյանը), Արևելագիտական, որը շուտով վեր է ածվում պատմագրական ֆակուլտետի (ղեկավարում էր ականավոր պատմաբան Հակոբ Համազասպի Մանանդյանը), Խորհրդային շինարարության (դեկանն էր նշանավոր գրականագետ Յոլակ Խանդադյանը), Մանկավարժական (դեկանն էր Գուրգեն Մեսրոպի Էդիլյանը)։

1922 թվականի մարտի 15-ից բժշկական դպրոցը միացվում է համալսարանին և բացվում է նաև բժշկական ֆակուլտետ, որի դեկան է նշանակվում բժիշկ Սպանդարատ Կամսարականը։

Համալսարանի կառուցվածքը այն ժամանակից ի վեր շատ փոփոխություններ է կրել։

Համալսարանի համար խոշոր նշանակություն է ունենում Հայկական ՍՍՌ Ժողկոմխորհի 1923 թվականի հոկտեմբերի 20-ի որոշումը՝ Երևանի ժողովրդական համալսարանը «Պետական համալսարան» վերանվանելու մասին։ Այդ որոշումը սոսկ անվանափոխություն չէր, դրանով Ժողկոմխորհը համալսարանը դասեց Միության մյուս համալսարանների շարքը, որով մեծացան նաև համալսարանի պարտականությունները։

Մինչև 1930 թվականը համալսարանն ուներ հետևյալ 5 ֆակուլտետները (մինչև այդ եղած առանձին փոփոխությունների վրա կանգ չենք առնում). գյուղատնտեսական, տեխնիկական, բժշկական, սոցիալ-տնտեսագիտական-իրավական (կամ իրավատնտեսագիտական) և մանկավարժական (պատմագրական, ֆիզիկա-մաթեմատիկական և կենսաբանական բաժիններով)։

1930 թվականին համալսարանի մի քանի ֆակուլտետների բազայի վրա ստեղծվեցին ինքնուրույն ինստիտուտներ։ Այսպես՝ բժշկական ֆակուլտետի բազայի վրա ստեղծվեց Բժշկական ինստիտուտը, տեխնիկական ֆակուլտետի բազայի վրա հիմնադրվեց Պոլիտեխնիկական ինստիտուտը, գյուղատնտեսական ֆակուլտետը վե-

[1] Տե՛ս «ՀՍՍՌ Խորհուրդների 4-րդ համագումար», 1925, էջ 192։

բաժվեց Գյուղատնտեսական ինստիտուտի, սոցիալ-անտեսագիտական-իրավական ֆակուլտետի փոխարեն կազմակերպվեց Կոոպերատիվ-անտեսագիտական ինստիտուտը։ Բուն համալսարանը վերածվեց մանկավարժական ինստիտուտի։

Ժողովրդական տնտեսության կոնկրետ պահանջները հաշվի առնելով, 1933 թվականի աշնանը միացվեցին Մանկավարժական և Կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտները և վերստեղծվեց Պետական համալսարանը (ռեկտոր նշանակվեց Տիգրան Մուշեղյանը) հետևյալ հինգ ֆակուլտետներով. տնտեսագիտական՝ պլանային, ֆինանսական, առևտրի, աշխարհագրական, սովետական շինարարության և վիճակագրական բաժիններով։ Պատմա-լեզվագրական՝ պատմական, գրական, լեզվաբանական բաժիններով, Բնապատմական՝ կենսաբանական և քիմիական բաժիններով։ Ֆիզիկա-մաթեմատիկական՝ ֆիզիկական և մաթեմատիկական բաժիններով։ Մանկավարժական՝ ժողովրդական լուսավորության, մանկավարժության, ռուս գրականության բաժիններով։

1934 թվականին տնտեսագիտական ֆակուլտետի բազայի վրա կազմվում են երկու ֆակուլտետ՝ երկրաբանա-աշխարհագրական և սովետական շինարարության, իսկ բնապատմական ֆակուլտետի բազայի վրա ստեղծվում են կենսաբանական և քիմիական ֆակուլտետները։

Նույն թվականին մանկավարժական ֆակուլտետը անջատվում է համալսարանից և վերածվում ինքնուրույն Մանկավարժական ինստիտուտի, որը մինչև այժմ էլ գոյություն ունի որպես Խ. Աբովյանի անվան հայկական Մանկավարժական ինստիտուտ։

1935 թվականին սովետական շինարարության ֆակուլտետը վերանվանվեց իրավաբանական ֆակուլտետ։ 1936 թվականին պատմա-լեզվագրական ֆակուլտետի բազայի վրա ստեղծվեցին պատմության և ֆիլոլոգիական ֆակուլտետները։

1944 թվականին երկրաբանա-աշխարհագրական ֆակուլտետը բաժանվում է երկրաբանական և աշխարհագրական ֆակուլտետների, իսկ 1945 թվականին բացվում է նոր՝ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, որը գոյություն է ունենում մինչև 1952 թվականը։ 1957 թվականի օգոստոսին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի և ՍՍՌՄ Բարձրագույն կրթության մինիստրության որոշման հիման վրա Երևանի Ա. Ա. Ժդանովի անվան ռուսական մանկավարժական ինստիտուտը միացվում է համալսարանին։ Բոլոր փոփոխություններից հետո համալսարանն այժմ ունի հետևյալ 11 ֆակուլտետները իրենց բաժիններով, 56 ամբիոններով ու մասնագիտացումներով։

1. Ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետ, ունի մաթեմատիկայի, մեխանիկայի և ֆիզիկայի բաժիններ՝ 11 տարբեր մասնագիտացումներով։ Ֆակուլտետը ունի 12 ամբիոն, աստղաֆիզիկայի, մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության, բարձրագույն մաթեմատիկայի, երկրաչափության և հանրահաշվի, դիֆերենցիալ հավասարումների, տեսական մեխանիկայի, ընդհանուր ֆիզիկայի, տեսական ֆիզիկայի, էլեկտրոնիկայի և ռադիոֆիզիկայի։

1957 թվականին կազմակերպվել են հաշվողական մաթեմատիկայի, նյութի կառուցվածքի առաձգականության և պլաստիկության տեսության ամբիոնները։

2. Քիմիական ֆակուլտետ՝ հետևյալ 4 մասնագիտացումներով և ամբիոններով՝ օրգանական քիմիայի, անօրգանական քիմիայի, անալիտիկ քիմիայի, ֆիզիկական և կոլոիդալ քիմիայի։

3. Երկրաբանական ֆակուլտետն ունի հետևյալ 4 ամբիոնները՝ ընդհանուր և կիրառական երկրաբանության, պատմական երկրաբանության և պալեոնտոլոգիայի, միներալոգիայի ու պետրոգրաֆիայի և օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման։

Այդ ֆակուլտետում ուսանողները մասնագիտանում են օգտակար հանածոների վայրերի երկրաբանության ու հետախուզության և երկրաբանական բարեգահանման ու օգտակար հանածոների հանքավայրերի որոնման գծով։

4. Աշխարհագրական ֆակուլտետն ունի 2 մասնագիտացում և 2 ամբիոն՝ տնտեսական և ֆիզիկական աշխարհագրության։

5. Կենսաբանական ֆակուլտետն ունի 6 ամբիոն՝ դարվինիզմի և գենետիկայի, բուսաբանության, բույսերի անատոմիայի և ֆիզիոլոգիայի, ագրոբիմիայի և հողագիտության, կենդանաբանության, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի։

6. Պատմության ֆակուլտետն ունի 3 մասնագիտացում և 3 ամբիոն՝ հայ ժողովրդի պատմության, ՍՍՌՄ պատմության, ընդհանուր պատմության։

7. Տնտեսագիտական ֆակուլտետն ունի 4 ամբիոն և 4 մասնագիտացում. ժողովրդական տնտեսության պլանավորման և ճյուղային էկոնոմիկայի, ֆինանսների և վարկի, առևտրի էկոնոմիկայի և տպրանքագիտության, վիճակագրության։

8. Իրավաբանական ֆակուլտետն ունի 3 ամբիոն՝ իրավունքի տեսության ու պատմու-

թյան, քրեական իրավունքի, քաղաքացիական իրավունքի։

9. Հայկական ֆիլոլոգիական ֆակուլտետն ունի 2 բաժին և 5 ամբիոն՝ հայոց լեզվի, հայ գրականության, ընդհանուր լեզվաբանության, արտասահմանյան գրականության, արևելյան ֆիլոլոգիայի։ Այստեղ ուսանողները մասնագիտանում են հայոց լեզվի, հայ գրականության և արևելյան ֆիլոլոգիայի գծով։

10. Ռուսական ֆիլոլոգիական ֆակուլտետն ունի 2 ամբիոն՝ ռուսաց լեզվի տեսության ու պատմության և ռուս գրականության։ Այդ գծով էլ տարվում են մասնագիտացումները։

11. Օտար լեզուների ֆակուլտետն ունի 4 ամբիոն՝ անգլերեն լեզվի, գերմաներեն լեզվի, ֆրանսերեն լեզվի և ռոմանո-գերմանական ֆիլոլոգիայի։

Բացի ֆակուլտետների կազմի մեջ մտնող ամբիոններից, կան նաև համահամալսարանական ամբիոններ, որոնց առարկաները ավանդվում են բոլոր, կամ համարյա բոլոր ֆակուլտետների համապատասխան կուրսերում։ Այդպիսի ամբիոններից են՝ ՍՄԿՊ պատմության, քաղաքատնտեսության, փիլիսոփայության, ռուսաց լեզվի, մանկավարժության և հոգեբանության, ֆիզիկական դաստիարակության ամբիոնները։

Պարտիայի պատմության, քաղաքատնտեսության և փիլիսոփայության ամբիոնները մեծ աշխատանք են կատարում ինչպես ուսանողների մարքս-լենինյան դաստիարակության, նրանց աշխարհայացքի ձևավորման ուղղությամբ, այնպես էլ գիտական-հետազոտական աշխատանքի գծով։

Այսպիսով իր գոյության մոտ չորս տասնամյակի ընթացքում Երևանի Պետական համալսարանը, որն սկզբնապես ուներ միայն երկու ֆակուլտետ, աճել և դարձել է մի խոշոր բարձրագույն ուսումնական հաստատություն՝ ժամանակակից գիտության և ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության պահանջներին համապատասխան մասնագիտացումներով հանդերձ։

* * *

Հայաստանում համալսարանական կրթության հիմնադրման, ընդլայնման և զարգացման գործում խոշոր ավանդ է ներմուծել առաջավոր հայ մտավորականության այն մասը, որը երկրում սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրից իր ուժերը նվիրաբերեց հայրապատ ժողովրդի կրթության գործին։

Համալսարանի հիմնադրման ժամանակ և նրա գործունեության առաջին շրջանում ամենալուրջ դժվարությունը համալսարանը համապատասխան դասախոսական կազմով ապահովելն էր։

1920 թվականի դեկտեմբերի 28-ին Հայաստանի Լուսժողկոմատը հաստատեց Երևանի ժողովրդական համալսարանի ժամանակավոր կանոնադրությունը, հաստիքները և դասախոսական կազմը[1]։ Համալսարանին տրվեց 20 պրոֆեսորի, 30 դասախոսի և 7 լեզուների դասատուների հաստիք։

Համապատասխան կադրերի պակասի պատճառով Լուսժողկոմատը կարողացավ հաստատել միայն 23 հոգու։ Հասարակագիտական ֆակուլտետի դասախոսներ հաստատվեցին Մանուկ Աբեղյանը, Արսեն Տերտերյանը, Գրիգոր Ղափանցյանը, Հակոբ Մանանդյանը, Գուրգեն Էդիլյանը, Գրիգոր Ջուբարյանը (իրավաբան, այժմ համալսարանի դոցենտ), Գրիգոր Մելիք-Ալավերդյանը (ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտի աշխատակից, այժմ թոշակառու), բնագիտական ֆակուլտետի դասախոսներ նշանակվեցին Ալեքսանդր Հակոբյանը (այժմ Հայկ. ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս), Ավ. Տեր-Պողոսյանը, Ստեփան Ղամբարյանը (քիմիկոս), ականավոր ճարտարապետ-պատմաբան Թորոս Թորամանյանը, Գուրգեն Գուրգենյանը (ինժեներ) և ուրիշներ։

Նոր ֆակուլտետների բացման առնչությամբ ավելի սուր է զգացվում դասախոսական կադրերի պակասը։ Համալսարանի ղեկավարությունը և Լուսժողկոմատը զբաղվում են Մոսկվայից, Բաքվից, Թբիլիսիից և այլ վայրերից նոր դասախոսներ հրավիրելու գործով։ 1921—1926 թվականների ընթացքում հրավիրվում են համալսարանի այն հիմնական ուժերը, որոնք իրենց ուսերի վրա տարան համալսարանական կրթությունը կազմակերպելու ամբողջ ծանրությունը։ Նրանց պատրաստած կադրերը հետագայում աշխատանքի անցան համալսարանում։

1921 թվականի ընթացքում համալսարանում աշխատանքի անցան Հայկ Աղաբյանը, Հարություն Անժուրը (Ջերմաքարյան), Հովհ. Նավակատիկյանը, Արշակ Տոնյանը, Գևորգ Ասատուրը, Պապա Քալանթարյանը, Աշխարհբեկ Քալանթարը։

1922 թվականին հրավիրվում են Հակոբ Հովհաննիսյանը, բժ. Վահան Արծրունին, բժ. Արշակ Հակոբյանը (այժմ բժշկական ինստիտուտի պրոֆեսոր), Գևորգ Գրձելյանը (այժմ Գյուղատնտեսության մինիստրության գիտության պրոպագանդայի վարչության աշխատակից)։

---

[1] «Դեկրետների և հրամանների ժողովածու» պրակ I, 1921, Էջմիածին, էջ 34—35։

1922 թվականի փետրվարից մինչև 1930 թվականի հուլիս ամիսը համալսարանի ռեկտորն էր բիմիկոս Հակոբ Հովհաննիսյանը։ 1923 թվականին հրավիրվում են Հրաչյա Աճառյանը, ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը, Հայկ Գյուլիբեխովյանը, բժ. Գրիգոր Մեղնիկյանը, Հովակիմ Բեգելյանը, բժ. Համբարձում Գեչեկը, Հայրապետ Հովհաննիսյանը, Խորեն Երիցյանը, 1924 թվականից համալսարանում աշխատանքի անցան Լեոն (Առաքել Բաբախանյանը), Ստեփան Ներսիսյանը, Միքայել Թումանյանը, Ստեփան Լիսիցյանը, բժ. Լևոն Հովհաննիսյանը, Հայկանդուխտ Չախմախչյանը, Սիմոն Հակոբյանը։ Համալսարանում սկսում են աշխատել նաև Տիգրան Մուշեղյանը, Վահան Ռշտունին, բժ. Արտաշես Մելիք-Ադամյանը (1925 թվականից), Տիգրան Զրբաշյանը, Աշոտ Տեր-Մկրտչյանը, Մուշեղ Սանթրոսյանը (1926 թ.) և ուրիշները։ Հիմնադրման օրից մինչև բժշկական ֆակուլտետի անջատումը և ինքնուրույն ինստիտուտի կազմակերպումը համալսարանում որպես դասախոս և տնտեսական գծով պրոռեկտոր մեծ գործ է կատարել բժիշկ Գրիգոր Արեշյանը։

1925 թվականից սկսած համալսարանը տալիս է իր շրջանավարտները, որոնցից լավագույնները, որպես լաբորանտներ, ասիստենտներ և դասախոսներ աշխատանքի են անցնում համալսարանում։

Դասախոսական կադրերի գիտական աճի գործում հսկայական նշանակություն ունեցավ գիտական աստիճանների և կոչումների սահմանման մասին ՍՍՌՄ Մինիստրների Սովետի 1934 թվականի հունվարի 13-ի որոշումը (որը որոշ փոփոխություններով ենթարկվեց 1937 թվականի մարտի 20-ի որոշմամբ և գործում է մինչև այսօր)։

Երևանի համալսարանում թեկնածուական դիսերտացիաներ սկսել են պաշտպանվել 1938 թվականից։ Հենց այդ թվականին թեկնածուական դիսերտացիաներ են պաշտպանել Մամիկոն Դանղյանը (այժմ բիմ. ֆակուլտետի դեկան, դոկտոր-պրոֆեսոր), Վերգինե Թառայանը (այժմ դոկտոր-պրոֆեսոր, Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ) և ուրիշներ։

Մինչև այժմ Երևանի համալսարանում պաշտպանվել են 395 թեկնածուական դիսերտացիա։

Դրանցից 171-ը այժմ էլ աշխատում են մեր համալսարանում։

Համալսարանում դոկտորական դիսերտացիաներ սկսել են պաշտպանվել 1943 թվականից, մինչև այժմ համալսարանում պաշտպանվել է 22 դոկտորական դիսերտացիա, որոնցից 6-ը բիմիական գիտությունների, 9-ը ֆիլոլոգիական գիտությունների, 6-ը պատմական գիտությունների և 1-ը կենսաբանական գիտությունների գծով։ Իրենց դոկտորական դիսերտացիաները Երևանի համալսարանում են պաշտպանել Աշոտ Աբրահամյանը (1943 թվականին, պրոֆեսոր), Առմեն Թախթաջյանը (1943 թ., Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից անդամ), Էդուարդ Աղայանը (1945 թ., Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից անդամ, լեզվաբանության ամբիոնի վարիչ), Ռուսեթ Հովհաննիսյանը (1947 թ. պրոֆեսոր, ռուս գրականության ամբիոնի վարիչ), Գուրգեն Սևակը (1948 թ., Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից անդամ, պրոֆեսոր, հայոց լեզվի ամբիոնի վարիչ), Տիրան Ղապանչյանը (1949 թ. պրոֆեսոր, անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ) և ուրիշներ։

Հատկանշական է, որ այժմ համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի մեջ մեծ տոկոս են կազմում մեր համալսարանի սաները, որոնք սովորել են, աճել, գիտական աստիճան և կոչում են ստացել համալսարանում։

1927 թվականին համալսարանի 166 աշխատողներից միայն 16-ն էին համալսարանի շրջանավարտներ (այն էլ միայն ասիստենտներ և լաբորանտներ), 1940 թվականին 240 պրոֆեսորներից ու դասախոսներից 110-ն էին համալսարանի սաներ, իսկ այժմ համալսարանում աշխատող 408 դասախոսներից 253-ը համալսարանի շրջանավարտներ են, որոնցից 25-ը գիտության դոկտորներ են (ընդամենը 48 հոգի), 153 գիտության թեկնածուներ (ընդամենը 213 հոգի)։

Դասախոսական և գիտական կադրերի պատրաստման գործում հսկայական դեր է կատարել համալսարանի ասպիրանտուրան, որը հիմնադրվել է 1928 թվականին։

1928/1929 ուսումնական տարում ընդունվում են առաջին 7 ասպիրանտները։

Համալսարանի առաջին ասպիրանտները եղել են Արզար Հովհաննիսյանը (ընդհանուր պատմության գծով, այժմ համալսարանի պրոֆեսոր, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, հասարակագիտական բաժանմունքների ակադեմիկոս-բարտուղար), Արարատ Ղարիբյանը (լեզվի պատմության գծով, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, ԳԱ Լեզվի ինստիտուտի դիրեկտոր), Հովհաննես Զալտիկյանը (քիմիայի գծով, համալսարանի պրոֆեսոր, ֆիզ. քիմիայի ամբիոնի վարիչ), Վարդան Գուլբանյանը (մասնավոր երկրագործության գծով, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս), Հարություն Փանոսյանը (գյուղատնտեսական բակտերիոլոգիայի գծով։ Հայկական ՍՍՌ Գի-

տությունների ակադեմիայի թղթակից-անդամ, միկրոբիոլոգիայի սեկտորի վարիչ), Նորայր Դարաղչյանը (ընդհանուր գրականության գծով, պրոֆեսոր, վախճանվել է 1954 թ.)։

26 տարիների ընթացքում համալսարանի ասպիրանտուրան ավարտել են 464 հոգի, որոնք աշխատում են ինչպես համալսարանում, այնպես էլ Հայաստանի և Միության տարբեր վայրերի ուսումնական և գիտական հաստատություններում։

Այժմ համալսարանում դասավանդում են 16 ակադեմիկոսներ և թղթակից-անդամներ, 48 գիտության դոկտորներ և պրոֆեսորներ, 213 գիտության թեկնածուներ ու դոցենտներ։ Դասախոսական կազմից 93-ը կանայք են։ Համալսարանում դասախոսում և ղեկավարում է աստրոֆիզիկայի ամբիոնը անվանի գիտնական, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը։

Դասախոսական կազմի աճի և նրա որակավորման բարձրացման մասին պատկերացում կարելի է կազմել հետևյալ աղյուսակից.

Հ.Հ.	Ուսումնական տարի	Դասախոսների ընդհանուր թիվը	Որից		
			ՍՍՌՄ և Հայկ. ՍՍՌ Գիտ. ակադեմիաների ակադեմիկոսներ և թղթակից անդամներ	Գիտության դոկտորներ և պրոֆեսորներ	Գիտության թեկնածուներ և դոցենտներ
1	1920—21/22	32	—	—	—
2	1940/41	240	1	19	53
3	1958/59	408	16	48	213

Պետական համալսարանը մեր ռեսպուբլիկայի ամենամեծ ուսումնական հաստատությունը լինելով հանդերձ, Ակադեմիայից հետո Սովետական Հայաստանի ամենախոշոր գիտական հիմնարկն է։ Համալսարանի դասախոսների գործունեության մեջ, նրա հիմնադրման առաջին օրվանից մինչև այժմ լուրջ տեղ է գրավում գիտա-հետազոտական աշխատանքը։

Համալսարանը ուսումնա-գիտական հիմնարկություն է։ Այստեղ նշանակալից աշխատանք է կատարվել և այժմ էլ կատարվում է հայագիտության բնագավառում։ Հիմնադրման օրվանից համալսարանում աշխատել է համալսարանի առաջին ռեկտոր, խոշոր հայագետ, ակադեմիկոս Հակոբ Մանանդյանը, որն այստեղ կատարած աշխատանքի տարիներին է գրել իր մի շարք կարևոր ուսումնասիրությունները՝ նվիրված Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմությանը, որոնք հսկայական նշանակություն ունեն հայագիտության համար։

Նրա «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» եռահատոր աշխատությունը ստեղծվել է անվանի պատմաբանի 1920—1930 թվականներին Երևանի համալսարանում կարդացած դասախոսությունների հիման վրա, որտեղ գիտնականը աղբյուրների մանրակրկիտ, խորն ու բազմակողմանի ուսումնասիրությամբ նոր լուսաբանում է տալիս հայ ժողովրդի պատմության մի շարք կարևորագույն պրոբլեմներին։

Մինչև 1929 թվականը Երևանի համալսարանում է աշխատել նշանավոր պատմաբան պրոֆեսոր Լեոն (Առաքել Բարխանյան, 1860—1932)։ Լեոն իր ամբողջ կյանքը նվիրելով հայոց պատմության ուսումնասիրությանը, համալսարանում աշխատած տարիներին զբաղվել է այդ պատմության նորագույն շրջանի հարցերով, Համալսարանը երկու հատորով (ապակետիպ) հրատարակել է Հայաստանի XVIII—XIX դարերի պատմությանը նվիրված նրա դասախոսությունների կոնսպեկտները։ 1946—1947 թվականներին Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակությամբ լույս տեսան Լեոյի «Հայոց պատմություն» աշխատության 2-րդ և 3-րդ հատորները՝ 120 տպագրական մամուլ ծավալով։

Հայաստանի նյութական կուլտուրայի պատմության ուսումնասիրության բնագավառում լուրջ աշխատանք են կատարել պրոֆ. պրոֆ. Աշխարհբեկ Քալանթարը և Խաչիկ Սամվելյանը։ Վերջինս իր «Հին Հայաստանի կուլտուրան» եռահատոր աշխատության մեջ նյութական արժեքների հիման վրա պարզաբանում է Հայաստանի կուլտուրայի պատմությանը վերաբերող մի շարք խնդիրներ։ Հայաստանի ֆեոդալական շրջանի պատմությանը նվիրված մի շարք աշխատություններ է գրել Հակոբ Զորյանը, որոնց մի մասը տպագրվել է համալսարանի «Տեղեկագրում»։

1925 թվականից մինչև այժմ համալսարանում բեղմնավոր գիտական աշխատանք է կա-

տարում պրոֆեսոր Վահան Ռշտունին։ Նրա գրքերին են պատկանում «Գյուղացիական ռեֆորմները Հայաստանում 1870 թվականին», «Հայ հասարակական հոսանքների պատմությունից», «Հայ հասարակական հոսանքները և 1860—70 թվականների ռեֆորմը» և մի շարք ուրիշ աշխատություններ։

Այժմ հայ ժողովրդի պատմության ամբիոնի անդամները զբաղված են հայ ժողովրդի պատմության բուհական դասագրքի պատրաստման խնդրով, որի երկու պրակները արդեն հրատարակվել են։

Համալսարանի հիմնադրման ժամանակաշրջանից սկսած գիտական և հետազոտական լուրջ աշխատանք է տարվել հայագիտության այնպիսի կարևոր բնագավառներում, ինչպիսիք են հայոց լեզուն և հայ գրականության պատմությունը։

1923 թվականից մինչև իր կյանքի վերջը, 1953 թվականի ապրիլի 16-ը, Երևանի համալսարանում է աշխատել աշխարհահռչակ գիտնական, պրոֆեսոր Հրաչյա Աճառյանը, որի «Հայոց լեզվի պատմություն», 7 հատորյա «Հայերեն արմատական բառարան», 562 լեզուների համեմատության վրա հիմնված «Լիակատար քերականություն», «Հայոց անձնանունների բառարան» մոնումենտալ աշխատությունները և սաղմաթիվ այլ ուսումնասիրություններ դուրս են գալիս սոսկ հայագիտության շրջանակներից և մեծ ավանդ են համաշխարհային լեզվաբանական գիտության գանձարանում։

Անվանի բանասեր, լեզվաբան պրոֆեսոր Մանուկ Աբեղյանը (1865—1944), որը 1920 թվականի դեկտեմբերից՝ հիմնադրման օրվանից աշխատել է Երևանի համալսարանում, իրավամբ համարվում է հայ հին գրականության խոշորագույն գիտակը։ Պրոֆեսոր Մանուկ Աբեղյանը հսկայական աշխատանք է կատարել հայ ժողովրդական բանահյուսության, առանձնապես «Սասունցի Դավիթ» էպոսի ուսումնասիրության բնագավառում։ Համալսարանում աշխատելու ընթացքում նա ստեղծել է իր «Հայ հին գրականության պատմություն» կապիտալ աշխատությունը։ Համալսարանի գիտական «Տեղեկագրի» 2—3, 4 և 6 համարներում (1927, 1928 և 1930) տպագրվել է նրա «Հին գուսանական ժողովրդական երգեր» ուսումնասիրությունը։ Գիտության վաստակավոր գործիչը ավելի քան 500 մամուլ կազմող իր աշխատություններում լուսաբանել է հայոց լեզվին և հայ գրականությանը վերաբերող բազմաթիվ հարցեր։

Համալսարանի առաջին դասախոսներից մեկը եղավ պրոֆ. Արսեն Տերտերյանը։ Նա հանդիսացավ համալսարանի հայ գրականության ամբիոնի հիմնադիրը, որի անփոփոխ ղեկավարը մնաց մինչև իր կյանքի վերջը։ Նա հեղինակ է բազմաթիվ արժեքավոր մենագրական աշխատությունների («Սասունցի Դավթի» հազարամյակը», «Նալբանդյանի էսթետիկան», «Պուշկինը հայ գրականության մեջ» (1939), «Ակրովյանի ստեղծագործությունը (1941), «Հակոբ Պարոնյանի գեղագիտական հայացքները», «Հայ հայրենասեր գրողները», «Հայ կլասիկներ» և այլն)։ Իր կյանքի վերջին տարիներին նա զբաղված էր հայ և ռուս առաջավոր գրականության տրադիցիաների ուսումնասիրությամբ, որի արդյունքը եղավ նրա «Վ. Գ. Բելինսկի» գիրքը և մի շարք ուրիշ աշխատություններ։

Համալսարանի հիմնադրման օրվանից մինչև իր կյանքի վերջը Երևանի համալսարանում, մանկավարժական աշխատանքի հետ միասին, գիտական մեծ աշխատանք է կատարել հայտնի լեզվաբան Գրիգոր Ղափանցյանը (1888—1957)։ Միաժամանակ նա հայտնի է խալդագիտական և խեթագիտական իր արժեքավոր ուսումնասիրություններով, որոնցից ամենահիշողը՝ «Ուրարտուի պատմությունը», հրատարակել է Երևանի համալսարանը գիտական աշխատությունների 14-րդ հատորում և առանձին գրքով (1940)։

Այժմ հայագիտության այդ բնագավառում լուրջ ուսումնասիրություններ են կատարում համալսարանի հայ գրականության ամբիոնը (վարիչ Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ, դոկտոր-պրոֆեսոր Մկրտիչ Մկրյան), հայոց լեզվի (վարիչ Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Գուրգեն Սևակ) և լեզվաբանության (վարիչ պրոֆեսոր Է. Ադայան) ամբիոնները։

Համալսարանում գիտա-հետազոտական լուրջ աշխատանքներ են կատարվել և կատարվում են բնական գիտությունների՝ մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, երկրաբանության, կենսաբանության գծով։

Համալսարանի հիմնադրման ժամանակվանից սկսած ֆիզիկայի և մաթեմատիկայի բնագավառում կարևոր աշխատանք են կատարել Ալեքսանդր Հակոբյանը, Հովհաննես Նավակատիկյանը, Արշակ Տոնյանը, Հարություն Անժուրը, Աշոտ Տեր-Մկրտչյանը և ուրիշները։ Սրանք մեծ ջանք են դրել գիտական տերմինոլոգիա մշակելու, դասագրքեր թարգմանելու, ինքնուրույն դասագրքեր-ձեռնարկներ ստեղծելու ուղղությամբ։ Համալսարանը հրատարակել է Հ. Նավակատիկյանի բարձրագույն հանրահաշվի և վերլուծական երկրաչափության ձեռնարկները, Ալ. Հակոբյանի տեսական մեխանիկայի դասընթացը, ֆիզիկայի ձեռնարկը և ուրիշ աշխատություններ։

Մաթեմատիկական գիտությունների բնագավառում խոշոր աշխատանք են կատարել համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետի սաները։ Համալսարանի մանկավարժական ֆակուլտետի ֆիզիկա-մաթեմատիկական բաժնի 1930 թվականի շրջանավարտ, Արտ. Շահինյանը մեծ վաստակ ունի երիտասարդ կադրեր պատրաստելու գործում։ Նա Հայկական ՍՍՌ ԳԱ Մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտի ղեկավարը լինելով հանդերձ, վարում է նաև համալսարանի մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոնը, որտեղ լուրջ գիտական աշխատանք է կատարվում մոտավորությունների տեսության մի քանի նորագույն հարցերի մշակման ուղղությամբ։

Ֆիզմաթ ֆակուլտետի շնորհալի շրջանավարտներին գիտական աշխատանքի ներգրավելու հետ միասին համալսարանի պրոֆեսոր Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս, ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետի դեկան Մ. Ջրբաշյանը գիտական մեծ աշխատանք է կատարում կոմպլեքս տիրույթում ինտեգրալ ձևափոխությունների և անալիտիկ ֆունկցիաների պարամետրական ներկայացումների ընդհանուր տեսության հարցերի լուծման ուղղությամբ, որտեղ նրան հաջողվել է ստանալ ինքնատիպ արդյունքներ։

Համալսարանում գիտական լուրջ աշխատանքներ են կատարում Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս, համալսարանի ամբիոնի վարիչ պրոֆեսոր Ն. Հարությունյանը (առաձգականության և սողքի տեսության բնագավառում), Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ, նյութի կառուցվածքի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ն. Քոչարյանը (կոսմիկական ճառագայթների ուսումնասիրության գծով) և ուրիշները։

Բնագիտական ֆակուլտետների դասախոսներից համալսարանի հիմնադրման շրջանում լուրջ գիտական հետազոտություններ են կատարել Պապա Քալանթարյանը (ագրոքիմիայի և միկրոբիոլոգիայի բնագավառում), Ավետիք Տեր-Պողոսյանը (կենսաբանական մարդի զարգացման պատմության և քաղցրահամ ջրերի ֆաունայի ուսումնասիրության բնագավառում), Հովակիմ Բեգլեյանը (բույսերի ֆիզիոլոգիայի գծով), Կարեն Երիցյանը (անասնապահության բնագավառում), Միքայել Թումանյանը (դաշտային կուլտուրաների ուսումնասիրության գծով)։ Բարձր լեռնային խոտհարքների և արոտավայրերի, ինչպես և կերաբույսերին վերաբերող առանձին հարցերի ուսումնասիրությամբ էր զբաղվում պրոֆեսոր Ն. Տրոիցկին։ Քիմիայի բնագավառում մեծ վաստակ ունեն պրոֆ. պրոֆ. Ստեփան Ղամբարյանը, Լևոն Ռոտինյանը, Հակոբ Հովհաննիսյանը և ուրիշները։ Երկրաբանական կադրերի պատրաստման և գիտական աշխատանքի ծավալման ուղղությամբ զգալի դեր են ունեցել Տիգրան Ջրբաշյանը և Պետրոս Ղամբարյանը։

Համալսարանում վերջին տարիներս մեծ տեղ է գրավում գիտական խոշոր պրոբլեմների հետազոտությանը նվիրված կարևորագույն թեմաների մշակումը։ Այդպիսի կարևոր թեմաներ են հանդիսանում էլեկտրոնային արագահաշվիչ ունիվերսալ մաթեմատիկական մեքենայի նախագծումն ու կառուցումը, լեռնային շրջանների պայմաններում բանջարանոցային կուլտուրաների նոր սորտերի ստացումը, բամբակենու ցեցի դեմ պայքարելու էֆեկտիվ միջոցներ գտնելու պրոբլեմը, օքսի-օքսո լակտոնների սինթեզի հետազոտությունը, հայ ժողովրդի պատմության, հայ գրականության պատմության բուհական դասագրքերի կազմումը և այլն։

Կարևոր հետազոտություններ են կատարվում ֆունկցիաների տեսության, մեխանիկայի, երկրաբանության, բանասիրության տարբեր բնագավառներում և այլ գիտությունների գծով։

1957 թ. երկրորդ կեսից համալսարանին կից գործում է «Երկրի արհեստական արբանյակների Երևանի վիզուալ-օպտիկական դիտման կայանը», որը համալսարանի գիտա-հետազոտական լաբորատորիաներից մեկն է։ Այնտեղ աշխատում են համալսարանի շուրջ 30 դասախոսներ, լաբորանտներ և ֆիզմաթ ֆակուլտետի աստղագիտական բաժնի ուսանողներ (կայանի աշխատանքը ղեկավարում է դոցենտ Բ. Թումանյանը)։

Իր գոյության մեկ և կես տարվա ընթացքում կայանում արբանյակների ու նրանց տանող հրթիռների բազմաթիվ դիտումներ են կատարվել, որոնց արդյունքները մշակվել և ուղարկվել են Մոսկվա՝ Հաշվողական կենտրոն։

Կայանի աշխատակիցների կողմից դիտումների կատարելագործման և դիտման նոր մեթոդներ առաջադրելու մասին գիտական հոդվածներ են տպագրվել միութենական աստղագիտական ամսագրերում։ Կայանի լավ աշխատանքի համար նրա աշխատակիցները պարգևատրվել են ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Աստրոսովետի, Բարձրագույն կրթության մինիստրության, ՀԼԿԵՄ Կենտկոմի պատվոգրերով և թանկարժեք նվերներով։ Կայանի 27 դիտողներ պարգևատրվել են «Միջազգային գեոֆիզիկական տարին» կրծքանշանով։

Համալսարանը ուսումնական ու գիտական գծով սերտ կապի մեջ է Սովետական Միության շատ բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ, այդ թվում՝ Մոսկվայի, Լենին-

գրադի, Կիևի, Խարկովի, Տարտուի, Բաքվի, Թբիլիսիի և այլն։

Սիստեմատիկ բնույթ է ստացել Բաքվի և Թբիլիսիի համալսարանների հետ համատեղ դիտակետն նստաշրջանների հրավիրումը և դասախոսությունների կարճատև դասընթացներ կարդալու համար պրոֆեսորների փոխանակությունը։

Համալսարանը կապեր ունի նաև արտասահմանյան մի շարք երկրների և ժողովրդական դեմոկրատիայի համարյա բոլոր երկրների ուսումնական ու գիտական հաստատությունների հետ։

Մեր համալսարանում դասախոսություններ են կարդացել Լեհական ժողովրդական ռեսպուբլիկայից՝ պրոֆեսոր Ի. Բյալեցկին, Չեխոսլովակիայի Կարլովի համալսարանի հայագետ պրոֆեսոր Յա. Եգլիչկան և ուրիշներ։

Լուրջ կերպով աճել է Սփյուռքի հայության հետաքրքրությունը դեպի հայրենի համալսարան, իսկ համալսարանը անընդհատ ծավալում է իր կապերը Սփյուռքի հայության, նրա առաջադեմ կազմակերպությունների հետ։

Համալսարանում գիտա-հետազոտական աշխատանքների բնագավառում զգալի գործ է կատարել և կատարում է հրատարակչությունը։

Համալսարանի գործունեության հենց առաջին տարիներին արդեն անհրաժեշտություն է զգացվում հրատարակել մի գիտական հանդես, որտեղ հնարավոր լիներ տպագրել գիտական աշխատությունները։

«Հայկական ՍՍՀ Պետական համալսարանի գիտական տեղեկագրի» առաջին համարը լույս է տեսնում 1925 թվականին, որը նվիրվում է Հայաստանում սովետական կարգերի հաստատման 5-րդ տարեդարձին։

Դեռևս 1921/22 ուսումնական տարում համալսարանը հրատարակում է 7 գիրք։ 1925 թվականի նոյեմբերից կազմակերպվում է համալսարանի ապակետիպը։ Մինչև 1937 թվականը Պետական համալսարանը ուներ միայն ապակետիպ։ 1937 թ. համալսարանի հրատարակչական բաժինը ձեռք է բերում սեփական տպարան և ստեղծվում է ինքնուրույն հրատարակչություն, որտեղ տպագրվում են ինչպես ուսումնական ծրագրերն ու դասագրքերը, այնպես էլ համալսարանի դասախոսների գիտական աշխատությունները։

Հրատարակչությունը իր գոյության ընթացքում լույս է ընծայել հարյուրավոր գրքեր, այդ թվում դասագրքեր, մենագրություններ, գիտական աշխատությունների ժողովածուներ և այլն։ Տարեցտարի ընդարձակվում են նրա կարողությունները։

Եթե հիմնադրման առաջին տարում հրատարակչությունը տվել է հազիվ մեկ տասնյակ անուն գիրք, ապա հետագայում այդ թիվը զգալիորեն աճել է։ Այսպես, 1952 թվականին լույս է տեսել 21 գիրք, 1953 թվականին՝ 33, 1954 թվականին՝ 39, 1955 թվականին՝ 52, 1956 թվականին՝ 37, 1957 թվականին 46, 1958 թվականին՝ 63։

Հրատարակչությունը հիմնականում լույս է ընծայում.

1. Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, դասախոսություններ, ինչպես նաև զանազան ծրագրեր ու մեթոդական ցուցումներ՝ երեկոյան և հեռակա բաժինների ուսանողների համար։

2. Մենագրություններ և գիտության առանձին հարցերին նվիրված ձեռնարկներ։

3. Գիտական աշխատությունների ժողովածուներ։ Եթե նախկինում լույս տեսնող «Տեղեկագրի» յուրաքանչյուր համարում հանդես էին գալիս համալսարանի տարբեր ֆակուլտետների գիտական աշխատողներ, ապա այժմ ամեն մի ֆակուլտետ (հաճախ նաև՝ ամբիոն) ունի թեմատիկ բնույթ կրող իր ժողովածուն, որ լույս է տեսնում պարբերաբար՝ տարին մեկ անգամ։ Արդեն հրատարակվել է գիտական աշխատությունների 67 հատոր (չհաշված ուսանողական գիտ. աշխատությունների 8 ժողովածուները)։

Հայերեն լույս տեսնող գրքերը (բացի դասագրքերից) հաճախ ունեն ռուսերեն, իսկ անհրաժեշտության դեպքում նաև անգլերեն համառոտ ամփոփումներ, որոնք ռուս և օտարազգի ընթերցողներին հնարավորություն են տալիս որոշ չափով ծանոթանալ գրքի բովանդակությանը։

Համալսարանը 1933 թվականի վերջերից սկսած ունի իր տպագիր բազմատիրաժ թերթը (սկզբնական շրջանում կոչվում էր «Հարվածային ուսանող», ապա «Սովետական ուսանողություն», այժմ «Երևանի համալսարան»), որն օգնում է ռեկտորատին և կազմակերպություններին ուսումնա-դաստիարակչական և գիտա-հետազոտական աշխատանքների կազմակերպման գործում։

Համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմին, ուսանողությանը և ասպիրանտներին գրականությամբ սպասարկելը իրականացրել և իրականացնում է համալսարանի գիտական գրադարանը։

Գիտական գրադարանը կազմակերպվել է համալսարանի հիմնադրման հետ միաժամանակ՝ 1921 թ., երբ ժողովրդական համալսարանին անցավ ուսուցչական սեմինարիայի գրքային ֆոնդը՝ 34 հազար կոտոր գրականությամբ։

1940 թվականին համալսարանի գրադարանը ուներ 141,408 հատոր գիրք կամ 1926 թվականի համեմատ՝ 2,7 անգամ ավելի։ Եթե 1926 թվականին մեկ ուսանողին ընկնում էր 44 կտոր գիրք, ապա 1940 թվականին՝ 82 կտոր գիրք, այսինքն՝ 2 անգամ ավելի։ Այժմ գրադարանի բոլոր ֆոնդերում կա մոտ 600.000 կտոր գիրք, որից մոտ 50000 կտորը մենագրություններ և հազվագյուտ գրքեր են։

Համալսարանի գրադարանը Սովետական Հայաստանի խոշորագույն գրադարաններից է, իսկ Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների սիստեմում՝ ամենախոշորը։ Գրադարանը կապ է պահպանում և գրքեր փոխանակում արտասահմանյան 12 երկրների ավելի քան 20 կազմակերպությունների գրադարանների հետ, այդ թվում Եվրոպայի բոլոր ժողովրդա-դեմոկրատական երկրների գրադարանների, Ֆրանսիայի կառավարության գլխավոր քարտուղարության դոկումենտացիայի բյուրոյի, Անգլիայի Օքսֆորդի և Քեմբրիջի համալսարանների, Լոնդոնի արդյունաբերական և գիտական հետազոտությունների դեպարտամենտի, ԱՄՆ-ի կոնգրեսի գրադարանի, Հարվարդի և Կալիֆորնիայի համալսարանների գրադարանների հետ և այլն։

Համալսարանի կոլեկտիվը ակտիվորեն մասնակցեց Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմին։

Հայրենական պատերազմի առաջին ամիսների ընթացքում համալսարանից 850 ուսանողներ ու կոլեկտիվի անդամներ մեկնում են Սովետական Բանակ։ Ռազմաճակատ են մեկնում Համալսարանի ռեկտոր (1938—41, 1949—1957 թթ.) Գարեգին Պետրոսյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու Արդար Մովսիսյանը, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու Սերգեյ Մաշուրյանը, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու Վաչե Սաղաթելյանը և շատ ուրիշներ, որոնք ակտիվորեն մասնակցում են ռազմական գործողություններին։

Հրամանատարության մարտական առաջադրանքները խիզախորեն կատարելու համար, Սովետական Միության հերոսի բարձր կոչման են արժանանում համալսարանի հատուկ ամբիոնի վարիչ՝ մայոր (այժմ գեներալ-մայոր) Անդրանիկ Ղազարյանը և ուսանող Սուրեն Սարգսյանը։

Ռազմաճակատում քաջաբար կռվեցին և հերոսի մահով ընկան ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետի շնորհալի դասախոս Սերգեյ Մաշուրյանը, պատմության ֆակուլտետի դասախոս, դոցենտ Ներսես Պողոսյանը, պարտիական կոմիտեի նախկին քարտուղար Միսակ Արմենյանը, համալսարանի թերթի նախկին խմբագիրներ՝ Ռուբեն Փորսուղյանը և Գառնիկ Ասկանյանը, արհկոմի նախագահ, երկրաբանական ֆակուլտետի ուսանող Սասունիկ Գրիգորյանը, պատմության ֆակուլտետի ուսանող Պողոս Մուրադյանը և ուրիշներ։

Չնայած պատերազմական ծանր ժամանակներին, համալսարանը շարունակում է իր նորմալ աշխատանքը։ Հայրենական պատերազմի տարիներին գիտական խորհուրդը, ռեկտորատը (ռեկտոր՝ պրոֆեսոր Հրաչյա Բունիաթյան) և դեկանատները համալսարանում տարվող ամբողջ ուսումնական և գիտական աշխատանքը վերակառուցում են ռազմական ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան։ Պարտիական կազմակերպության կողմից (պարտկոմի քարտուղար Հովհ. Թումանյան, ապա Ե. Եղիազարյան) մոբիլիզացվում է ողջ կոլեկտիվը ռազմաճակատին օգնելու համար։ Համալսարանի բոլոր առարկաների գծով վերանայվում են ուսումնական պլաններն ու ծրագրերը և հարմարեցվում պատերազմական ժամանակի պահանջներին։

Հայրենական պատերազմի տարիներին համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմը սկսեց ավելի լարված աշխատել. գիտական հետազոտություններն ունեին ոչ միայն տեսական, այլև գործնական մեծ նշանակություն։ Նրանցից շատերը ներգրվեցին արտադրության մեջ։ Արտադրությանը օգնելու տեսակետից հաջող աշխատանք էին տանում տատանումների ֆիզիկայի, էքսպերիմենտալ ֆիզիկայի, օրգանական քիմիայի, անօրգանական քիմիայի ամբիոնները։ Պատերազմի ժամանակ Երևանի համալսարանում անվանի ֆիզիկոս-ակադեմիկոսներ Ալիխանյան եղբայրների ղեկավարությամբ ստեղծվում է ֆիզիկայի գիտա-հետազոտական ինստիտուտ, որը 1942—43 թվականներին մեծ գործ է կատարում կոսմիկական ճառագայթների ուսումնասիրության բնագավառում։ Համալսարանին կից երկու տարի գործելուց հետո, Ակադեմիայի հիմնադրման կապակցությամբ, այդ ինստիտուտը մտնում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի կազմի մեջ, որպես նրա Ֆիզիկայի ինստիտուտ։

Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո համալսարանը վերակառուցում է իր աշխատանքը խաղաղ ժամանակաշրջանի ժողովրդական տնտեսության, գիտության բոլոր ճյուղերի հետագա զարգացման պահանջների ոգով։

* * *

Հայաստանում համալսարանական կրթության զարգացման, ֆակուլտետների և մասնա-

դիտացումների ավելացման հետ միասին աճել է նաև համալսարանի ուսանողության թիվը։ Ֆակուլտետների և ուսանողության աճը հետևյալ պատկերն է ներկայացնում.

Ուսումնական տարին	Ֆակուլտետների թիվը	Ուսանողների թիվը
1920/21—22	2	255
1929/30	5	1316
1940/41	8	1461
Այժմ՝ 1958/59	11	4511, որից 3378 ստացիոնարում

Համալսարանում սովորողներից տղաներ են 1436-ը՝ աղջիկներ՝ 1952-ը։ Ուսանողներից 925-ը բանվորներ ու բանվորների երեխաներ են, 718-ը կոլտնտեսականներ ու կոլտնտեսականների երեխաներ։ Համալսարանում սովորում են 177 հայրենադարձ պատանիներ ու աղջիկներ։ Ուսանողներից 596-ը այլ ռեսպուբլիկաներից են։ Համալսարանում սովորում են 14 ազգերի ներկայացուցիչներ՝ հայեր, ռուսներ, ուկրաինացիներ, բելոռուսներ, վրացիներ, ադրբեջանցիներ, կարելացիներ, քրդեր և այլն։

Եթե նախասովետական շրջանում հայ երիտասարդները, այն էլ միայն ունևորների երեխաները, մեկնում էին ցարական Ռուսաստանի մայրաքաղաքը և արտասահման բարձրագույն կրթություն ստանալու, ապա այժմ արտասահմանից են գալիս Երևանի համալսարանում սովորելու, այժմ Երևանի համալսարանում սովորում են Միացյալ Արաբական ռեսպուբլիկայից, Լիբանանից, Բուլղարիայից, Իրանից եկած հայ պատանիներ ու աղջիկներ։ Համալսարանում, ինչպես սովետական բոլոր բարձրագույն դրպրոցներում, ոչ միայն ուսումը ձրի է, այլև առաջադեմ բոլոր ուսանողները պետությունից ստանում են թոշակ։

* * *

Անցած տարիների ընթացքում անհամեմատ աճել է նաև համալսարանի նյութա-տեխնիկական բազան.

Համալսարանը իր հիմնադրման սկզբնական շրջանում գտնվում էր շատ անբարենպաստ պայմաններում։ Չկային լաբորատորիաներ, կաբինետներ, արհեստանոցներ, գործնական աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումներ։ Չկին բավարարում լսարանները։ Բժշկական ֆակուլտետի հիմնադրումը ավելի մեծ դժվարություններ հարուցեց։ Անհրաժեշտ էին անատոմիկում, կլինիկաներ, լաբորատորիաներ և այլն։

Բժշկական ֆակուլտետը հիմնադրող դասախոսներից մեկը՝ Վահան Արծրունին, այսպես է նկարագրում 1922 թվականի մարտին իր առաջին դասախոսությունը՝ համալսարանի բժշկական ֆակուլտետում։

«Համալսարանի բակում գտնվում էր նախկին հիվանդանոցի լվացքատունը՝ մի քանի ցածրիկ սենյակներ, նրանց կից ձախ թևին ախոռն ու կառապանի սենյակը, որի կտրին դրված էր դեզը, իսկ ախոռատան առջև բարձրանում էր ձիերի աղբակույտը՝ ծածկված ձյունով։ Լվացքատան սենյակներից մեկը վերածվեց լսարանի, իսկ երկուսը հատկացրին հերձարանի, նրանցից մեկը ծառայում էր և՛ իբրև հերձարան, և՛ իբրև դիականոց, այնպես որ մենք պետք է աշխատեինք անտանելի գարշահոտության, մթության և խոնավության մեջ։ Դռներն ունեին լայն ճեղքեր, լուսամուտները ջարդված էին, տանիքը երկու տեղից ծակ էր, որտեղից երևում էր երկինքը։ Համալսարանի հին շենքի ստորին հարկում մի աղոտ ու մութ սենյակ կար, մեջը դրված մի քանի աշակերտական թեր սեղաններ և մի փոքրիկ գրատախտակ։ Այդ սենյակում սկսեցի կարդալ առաջին դասախոսությունս, ուսանողներից մեկը մի նավթի լամպ ճարեց, որի ապակին ջարդված էր ու ծխում էր։ Լամպը դնելու սեղան չկար և ուսանողներից մեկը բռնել էր այն իր ձեռքին»[1]։

Կարճ ժամանակից հետո վիճակը փոխվում է։ Համալսարանի վարչությունը ոչ միայն հաջողությամբ զբաղվում է համալսարանի դասախոսական կազմը ուժեղացնելու, նոր մասնագետներ հրավիրելու հարցով, այլև Հայաստանի կառավարության, Պարենային ժողկոմատի, Առժողկոմատի և Ժողտնտխորհի օգնությամբ գործնական պարապմունքներ անցկացնելու համար համալսարանին կից հիմնում է Անալիտիկ քիմիայի (1922 թ. նոյեմբեր), ֆիզիկայի (1922 թ. նոյեմբեր), ֆիզիոլոգիայի (1922), անատոմիայի (1922), հանքաբանական և այլ աշխատանոցներ, մեխանիկական արհեստանոց և այլն։

Համալսարանի լաբորատորիաների վիճակը որոշ չափով կարգավորվում է, երբ 1922—23 թթ. Հայկական ՍՍՌ Ժողկոմխորհի միջնորդությամբ Անդրժողկոմխորհը ժողովրդական համալսարան կահավորելու համար բաց է թողնում 25.000 ռ. գումար։

Եթե համալսարանի հիմնադրումից հետո առաջին շրջանում ուսումնական պրոցեսում

[1] «Հոկտեմբեր — նոյեմբեր» տարեգիրք։ 1932, էջ 434—435։

հիմնական տեղը պատկանում էր դասախոսություններին, որովհետև գործնական աշխատանքի հնարավորություններ չկային, ապա այդ լաբորատորիաների, կաբինետների ստեղծումը հնարավորություն է տալիս դասախոսություններին զուգընթաց կազմակերպել նաև գործնական աշխատանքներ, սեմինարներ և այլն։

Տարեցտարի մեծանում և լայնանում է համալսարանի նյութա-տեխնիկական բազան, ամեն տարի ավելանում է նրա բյուջեն։

Համալսարանի գործունեության ընդլայնման հետ մեկտեղ կատարվում են նաև շինարարական աշխատանքներ, այսպես օրինակ, Շրջանային (ներկայումս Կիրովի անվան) փողոցի վրա կառուցվում է անատոմիկումի շենքը, որը այժմ գտնվում է Բժշկական ինստիտուտի տրամադրության տակ, Նորքի խճուղու վրա, Դեստուի ափին, Բրաժնիկովի նախկին երկհարկանի տունը վերակառուցվում է բնապատմական թանգարանի և բնագիտական աշխատանքների համար։ Քանաքեռի խճուղու տակ կառուցվում է կաթնատնտեսական լաբորատորիայի շենք և անասնաբուծական ագարակ (ներկայումս գտնվում է Գյուղատնտեսական ինստիտուտի տրամադրության տակ), Կիրովի փողոցի վրա, Քաղգավգործկոմի բյուջեով կառուցվում են ուսանողական և պրոֆեսորական հանրակացարաններ։

1930 թ. կառուցվում են մի շարք նոր օբյեկտներ, այդ թվում համալսարանի ֆիզիկա-քիմիական կորպուսը (Պոլիտեխնիկ ինստիտուտի հին շենքը), 1935 թվականին կառուցվում է համալսարանի կենտրոնական շենքի երրորդ հարկը և այլն։

Համալսարանի բյուջեի աճը, կապիտալ ներդրումներն ու շինարարությունը հնարավորություն են ստեղծում համալսարանում ուսումնական և գիտա-հետազոտական աշխատանքների ծավալման համար։

Այժմ համալսարանը ունի մի քանի տասնյակ գիտա-ուսումնական կաբինետներ ու լաբորատորիաներ, որոնք կահավորված են ժամանակակից գիտության ու տեխնիկայի մակարդակին համապատասխան սարքավորումներով, այսպես, համալսարանն ունի ֆիզիկայի, նյութի կառույցի, էլեկտրոնիկայի և ռադիոֆիզիկայի, տեսական մեխանիկայի, անալիտիկ քիմիայի և բազմաթիվ այլ լաբորատորիաներ։

ՍՍՌՄ Բարձրագույն կրթության մինիստրության օգնությամբ համալսարանում այժմ հիմնադրվում է էլեկտրոնային հաշվիչ ու ղեկավարման մեքենաների և պոլիմերների ֆիզիկո-քիմիայի պրոբլեմային լաբորատորիաներ, որտեղ կատարվեն ուսումնական և գիտա-հետազոտական աշխատանքներ։

Համալսարանի նյութա-տեխնիկական բազան էլ ավելի ընդլայնելու, ուսումնա-գիտական աշխատանքների համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով ՍՍՌՄ Մինիստրների Սովետի որոշմամբ 1953 թվականից սկսված է Երևանի համալսարանի ուսումնական շենքերի կոմպլեքսի շինարարությունը Ե. Չարենցի փողոցի վրա, մոտ 40 միլիոն ռուբլու ընդհանուր ծավալով։

1956 թվականին այդ կոմպլեքսից շահագործման է հանձնվել Կենսաբանական ֆակուլտետի կորպուսը, որը Նոյեմբերյանի անվան ֆիզիտից կառուցված մի հոյակապ շենք է։ Այնտեղ այժմ տեղավորված են կենսաբանական, քիմիական և երկրաբանական ֆակուլտետները։

Ամբողջ կոմպլեքսի ավարտմամբ համալսարանը կստանա 27.000 քառ. մետր ուսումնական տարածություն. 1959 թվականին կավարտվի կենտրոնական կորպուսի աջ և ձախ թևերի շինարարությունը, որը նախատեսված է բանասիրական և պատմության ֆակուլտետների համար։ Առանձին կորպուսներ են կառուցվելու նաև ֆիզիկայի, մեխանիկա-մաթեմատիկական, քիմիական և երկրաբանական ֆակուլտետների համար, որտեղ նախատեսված են ֆունդամենտալ գիտական գրադարան, կաբինետներ և լաբորատորիաներ՝ գիտության ու տեխնիկայի վերջին նվաճումներին համապատասխան սարքավորումներով։

Տեխնիկական բազայի և նյութական հնարավորությունների ընդարձակումը լուրջ կորպով կխթանի համալսարանում ուսումնական ու գիտական աշխատանքների հետագա ծավալմանը։

Սովետական կառավարության հոգատարությունը դրսևորվում է նաև համալսարանի բյուջեի անշեղ աճի մեջ, որը իր հերթին բնութագրում է համալսարանի աշխատանքների ծավալումը։

Եթե համալսարանի բյուջեն 1923 թ. կազմում էր 49.216 ռուբլի, 1933 թվականին 2.669.000 ռուբլի, իսկ 1940 թ. 8.360.000 ռուբլի, ապա 1958 թվականին համալսարանի բյուջեն կազմում է 31.231.500 ռ., այսինքն մոտ չորս անգամ ավելի, քան 1940 թվականին և մոտ 12 անգամ ավելի, քան 1933 թվականին։

1933 թվականին մեկ ուսանողի վրա կատարված ծախսը կազմում էր 3607 ռուբլի, 1940 թվականին՝ 4866 ռուբլի, իսկ 1958 թվականին՝ 8655 ռուբլի։



Երևանի Պետական համալսարանի ուսումնական շենքերի կոմպլեքսը (Ճարտարապետ՝ Է. Ա. Տիգրանյան).
1936 թ. շահագործման է հանձնվել կենսաբանական ֆակուլտետի կորպուսը։ Այս տարի շահագործման կհանձնվեն
կենսաբանական կորպուսի աջ և ձախ թևերը։

Պետությունը ավելի մեծ գումարներ է հատկացրել համալսարանին նախապատերազմյան շրջանում. 1945—1950 թվականների բյուջեով ծախսերի ծավալը 23 տոկոսով գերակշռել է մինչ 1945 թվականի բյուջեների ընդհանուր գումարը, այսինքն նախապատերազմյան 5 տարվա բյուջեն ավելին է եղել համալսարանի գոյության 25 տարիների բյուջեների գումարից։ Այսպիսով համալսարանի բյուջեի աճը ներկայացնում է հետևյալ պատկերը.

Ուսումնական տարի	Բյուջեով հատկացված գումարը (հազ. ռ-ով)	Որից	
		աշխատավարձ	թոշակ
1920—21/22	Համալսարանը հաստատված բյուջե չի ունեցել	—	—
1922/23	49,216	37,895	50 թոշակառու*
1940/41	8,360,300	4,119,400	2,311,141
1958 թվական	31,231,500	16,714,000	9,795,600
	—	—	2862 թոշակառու

* Հայկական ՍՍՌ ժողկոմխորհի հատուկ ֆոնդից։

Դժվար է գերագնահատել այն գերը, որ կատարել ու կատարում է Պետական համալսարանը մեր ժողովրդական տնտեսության, գիտության ու կուլտուրայի բնագավառների համար բարձրորակ կադրեր պատրաստելու գործում։

Համալսարանը իր գոյության ընթացքում երկրին տվել է 8603 երիտասարդ մասնագետներ, որոնք մեր ռեսպուբլիկայում և նրանից դուրս ակտիվորեն մասնակցում են սոցիալիստական շինարարությանը։

Այս տարի համալսարանը նորից կտա 790 շրջանավարտներ։ Համալսարանը պատրաստել է 747 ֆիզիկոսներ և մաթեմատիկոսներ, 667 բիմիկոսներ, 715 պատմաբաններ, 2059 բանասերներ, 775 իրավաբաններ, 1285 տնտեսագետներ, 689 կենսաբաններ, 447 աշխարհագրագետներ, 613 երկրաբաններ, իր գոյության առաջին տասնամյակի ընթացքում նաև՝ 137 բժիշկներ, 279 գյուղատնտեսներ, 47 ինժեներ-ճարտարապետներ։

Այս թվերը ցույց են տալիս, թե համալսարանի շրջանավարտները ի՛նչ կշիռ ու տեղ ունեն ժողովրդական տնտեսության մեջ։

Համալսարանը ոչ միայն հանդիսացավ այն արմատը, որից ճյուղավորվեցին մեր ռեսպուբլիկայի մյուս ինստիտուտները, այլև հիմք ստեղծեց Հայաստանի Գիտությունների ակադեմիայի հիմնադրման համար, և այժմ էլ նա ամեն տարի Գիտությունների ակադեմիայի ինստիտուտները համալրում է նոր գիտական աշխատողներով։

1943 թվականի նոյեմբերի 25-ին Հայաստանի Գիտությունների ակադեմիայի հիմնադրման ժամանակ ընտրված 23 ակադեմիկոսներից 11-ը համալսարանի պրոֆեսորներ էին։ Այժմ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի 59 ակադեմիկոսներից և թղթակից-անդամներից 21-ը Երևանի համալսարանի շրջանավարտներ են, իսկ 36-ը դասախոսել կամ այժմ էլ դասախոսում են համալսարանում։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Նախագահության 9 անդամներից 6-ը համալսարանի շրջանավարտներ են (վիցե-պրեզիդենտ Մ. Գ. Ներսիսյանը, ակադեմիկոս-բարտուղար Հ. Խ. Բունիաթյանը, Հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-բարտուղար Ա. Ռ. Հովհաննիսյանը, համալսարանի ռեկտոր Գ. Ս. Դավթյանը, Մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտի դիրեկտոր Ա. Լ. Շահինյանը, Մաթեմատիկական մեքենաների ինստիտուտի և հաշվողական կենտրոնի դիրեկտոր Ս. Ն. Մերգելյանը)։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ինստիտուտների և լաբորատորիաների մեծ մասը ղեկավարում են Երևանի համալսարանի շրջանավարտները։

Մեր համալսարանի գյուղատնտեսական (1926) և բժշկական (1930) ֆակուլտետների շրջանավարտ է անվանի ֆիզիոլոգ, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Էդրաս Հասրաթյանը։

Երևանի համալսարանի շրջանավարտ է Հայկական ՍՍՌ ԳԱ Մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտի դիրեկտոր, համալսարանի պրոֆեսոր, անվանի մաթեմատիկոս Արտաշես Շահինյանը, որի ղեկավարած ինստիտուտի 43 գիտական աշխատակիցներից 26-ը նույնպես մեր համալսարանի շրջանավարտներ են։

Երևանի համալսարանի արժանավոր սան, ՍՍՌՄ ԳԱ թղթակից-անդամ, Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Սերգեյ Մերգելյանը ղեկավարում է Ակադեմիայի հաշվողական կենտրոնը

(որի 35 աշխատողներից 22-ը Համալսարանի շրջանավարտներ են) և մաթեմատիկական մեքենաների գիտա-հետազոտական ինստիտուտը, որտեղ Համալսարանի 90 շրջանավարտներ լուրջ գիտա-հետազոտական աշխատանք են կատարում։

Համալսարանի շրջանավարտներ են նաև Պատմության ինստիտուտի դիրեկտոր, դոկտոր-պրոֆեսոր Ս. Երեմյանը, Տնտեսագիտության ինստիտուտի դիրեկտոր, դոկտոր-պրոֆեսոր Ար. Մարուխյանը, Պատմական թանգարանի դիրեկտոր, դոկտոր-պրոֆեսոր Կ. Ղաֆադարյանը, բժշկական ինստիտուտի դիրեկտոր, պրոֆ. Լ. Ա. Հարությունյանը, ԱՍՌՄ Ճարտարապետության և շինարարության ակադեմիայի իսկական անդամ Հ. Ս. Մարգարյանը, արվեստի վաստակավոր գործիչ Մ. Վ. Գրիգորյանը, Մանկավարժական ինստիտուտի դիրեկտոր Վ. Համազասպյանը, Մատենադարանի դիրեկտոր Լ. Խաչիկյանը

Մեր Համալսարանն են ավարտել նաև անվանի բանաստեղծներ Նարիրի Զարյանը, Հովհաննես Շիրազը, Սողոմոն Տարոնցին, Սիլվա Կապուտիկյանը և ուրիշներ։

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր երկրաբանության և ընդերքի պաշտպանության վարչության սիստեմում աշխատում են Երևանի Համալսարանն ավարտած 256 երկրաբաններ, 14 աշխարհագրագետներ, 7 քիմիկոսներ, 5 տնտեսագետներ, 5 բիոլոգներ և այլն։ Վարչության գլխավոր ինժեներ, Համալսարանի ասն Աշոտ Ասլանյանը պրակտիկ աշխատանքի հետ միասին խոշոր գիտա-հետազոտական աշխատանք է կատարում։ Նա պաշտպանել է դոկտորական դիսերտացիա և հեղինակ է 43 աշխատությունների, որոնցից 3-ը մենագրություններ են։

ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—65 թվականների 7-ամյա պլանը և կյանքի հետ դպրոցի կապն ամրապնդելու ու ժողովրդական կրթության սիստեմի վերակազմության վերաբերյալ ՍՍՌՄ Գերագույն Սովետի ընդունած օրենքը նոր հեռանկարներ են բացում ընդհանրապես Համալսարանական կրթության, հետևապես և մեր Համալսարանի հետագա զարգացման համար։ Պարտիայի և կառավարության պահանջների համաձայն Երևանի Համալսարանում լրջորեն բարելավվելու է կադրերի պատրաստման գործը, ուսուցումը կյանքի հետ կապելու և գիտության ու տեխնիկայի այսօրվա պահանջների մակարդակին համապատասխան դարձնելու ոգով։

Առաջիկա տարիների ընթացքում մեզ մոտ հատուկ ուշադրություն է դարձվելու հատկապես մաթեմատիկայի, առանձնապես հաշվողական մաթեմատիկայի, գիֆերենցիալ հավասարումների, բիոֆիզիկայի, բիոքիմիայի, ֆիզիոլոգիայի, միջուկային ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի, աստրոֆիզիկայի, կիսահաղորդիչների ֆիզիկայի, կոսմիկական ճառագայթների և էլեկտրոնիկայի, բարձր մոլեկուլյար միացությունների ֆիզիկո-քիմիայի, քիմիական կատալիզի և հանքային հումքի քիմիայի գծով բարձրորակ կադրեր պատրաստելու վրա։

Անհրաժեշտ կլինի Համալսարանում ստեղծել նաև միջֆակուլտետային այնպիսի մասնագետների պատրաստում, ինչպիսիք են լեզվաբան մաթեմատիկոսներ՝ մեքենական թարգմանությունների համար, մաթեմատիկոս տնտեսագետներ՝ հաշվառման և պլանավորման կենտրոնների համար, որտեղ օգտագործում են էլեկտրոնային մեքենաներ, քիմիկոսներ և ֆիզիկոսներ՝ կենսաբանական թեքումով և, ընդհակառակը, կենսաբաններ՝ ֆիզիկական և քիմիական թեքումով, հումանիտար գիտությունների մասնագետներ՝ բնական գիտությունների հիմունքների գիտելիքներով։

Համալսարանական կրթությունը կյանքին, ժամանակակից գիտության ու տեխնիկայի մակարդակին մոտեցնելու նպատակով Համալսարանում վերանայվում են բոլոր առարկաների ուսումնական ծրագրերը, այն հաշվով, որպեսզի առանց վնասելու ուսուցման տեսական բարձր մակարդակը, ապահովվի պրակտիկ արտադրական հմտություններով զինված մասնագետների պատրաստումը։ Դրա համար հարկ կլինի որոշ չափով կրճատել դասախոսությունները, պահպանելով տվյալ առարկայի հիմնական սկզբունքային դրույթները, որոնք պետք է ուղղություն տան ուսանողի ինքնուրույն աշխատանքին։ Ընդհակառակը, ուսումնական ծրագրերում ավելացվելու են պրակտիկ պարապմունքների, արտադրական պրակտիկայի ժամերը և ուժեղացվելու է ուսանողների ինքնուրույն աշխատանքը լաբորատորիաներում, արհեստանոցներում և գիտական կաբինետներում։ Էլ ավելի է ուժեղանալու գիտա-հետազոտական աշխատանքը։

Համալսարանի պարտիական, կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունները, պրոֆեսորա-դասախոսական ողջ կոլեկտիվը այժմ նոր եռանդով լծվել են ԱՄԿՊ 21-րդ արտահերթ համագումարի պատմական որոշումների կատարման գործին, ակտիվ պայքար են ծավալել մասնագետների պատրաստումը էլ ավելի բարելավելու, ուսուցումը կյանքի, պրակտիկայի հետ կապելու, գիտա-հետազոտական աշխատանքի մակարդակի հետագա բարձրացման ուղղությամբ։

Լ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ